ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 1486 - Ա

ԳՈՒՅՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերը, «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 247-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Լիտվական «Սոլետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Դի Օհմ Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունով ստացված, ապա «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով 2024 թվականի փետրվարի 23-ի թիվ 05100010/230224/0013928 (մաքսային արժեք՝ 70,494,280 դրամ, բրուտտո քաշ՝ 10,754.8 կգ), 05100010/230224/0013922 (մաքսային արժեք՝ 20,256,271 դրամ, բրուտտո քաշ՝ 2,993.64 կգ), 05100010/230224/0013917 (մաքսային արժեք՝ 45,835,843 դրամ, բրուտտո քաշ՝ 6,911.56 կգ), 05100010/230224/0013975 (մաքսային արժեք՝ 2,183,875 դրամ, բրուտտո քաշ՝ 311.04 կգ), 05100010/230224/0013964 (մաքսային արժեք՝ 4,368,630 դրամ, բրուտտո քաշ՝ 659.56 կգ), 05100010/230224/0013979 (մաքսային արժեք՝ 18,859,468 դրամ, բրուտտո

քաշ՝ 2,769.66 կգ), 05100010/230224/0013966 (մաքսային արժեք՝ 1,823,042 դրամ, բրուտտո քաշ՝ 241.96 կգ), 05100010/230224/0013937 (մաքսային արժեք՝ 1,557,466 դրամ, բրուտտո քաշ՝ 191.06 կգ), 05100010/230224/0013969 (մաքսային արժեք՝ 7,306,655 դրամ, բրուտտո քաշ՝ 1,037.22 կգ), 05100010/230224/0013971 (մաքսային արժեք՝ 16,133,464 դրամ, բրուտտո քաշ՝ 2,257.88 կգ), 05100010/230224/0013973 (մաքսային արժեք՝ 4,899,344 դրամ, բրուտտո քաշ՝ 710 կգ), 05100010/230224/0013977 (մաքսային արժեք՝ 2,480,619 դրամ, բրուտտո քաշ՝ 356,56 կգ), 05100010/230224/0013958 (մաքսային արժեք՝ 2,480,619 դրամ, բրուտտո քաշ՝ 396,66 կգ) ապրանքների հայտարարագրերով ձևակերպված և պետական սեփականությանը փոխանցված արևային վահանակներն ու այլ սարքավորումները (այսուհետ՝ գույք) փոխանցել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, և վերջինիս կողմից՝ նվիրաբերության պայմանագրի հիման վրա, հանձնել սույն որոշման հավելվածում նշված նվիրառուներին՝ շրջակա միջավայրի աղտոտման և կլիմայի փոփոխության խնդիրները լուծելու՝ էներգետիկ կարիքներն ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ու Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումից հետո՝ 30-օրյա ժամկետում ապահովել գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքումը՝ դրանցում նախատեսելով դրույթներ գույքը բացառապես շրջակա միջավայրի աղտոտման և կլիմայի փոփոխության խնդիրները լուծելու՝ էներգետիկ կարիքներն ապահովելու նպատակով օգտագործելու, սույն կետում նշված պայմանները չպահպանելու դեպքում՝ նվիրաբերության վերացման հնարավորության մասին, ինչպես նաև գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ սահմանելով նաև,

որ հանձնման-ընդունման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են գույքն ընդունող նվիրառուների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ